

Հայտարարություն

2022 թվականի փետրվարի 28-ին և մարտի 1-ին ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում անցկացվելու է «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի եզրափակիչ փուլը:

«ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարը (այսուհետ՝ Մրցաշար) անցկացվելու է երկու տարիքային խմբերով՝

1-ին տարիքային խումբ՝ 18-ից 35 տարեկան (1987-2004 թթ. ծնված) կանայք, 18-ից 40 տարեկան (1982-2004 թթ. ծնված) տղամարդիկ,

2-րդ տարիքային խումբ՝ 36 (1986 թ. ծնված) և բարձր տարիքի կանայք, 41 (1981 թ. ծնված) և բարձր տարիքի տղամարդիկ:

Մրցաշարն անցկացվելու է 3 փուլով՝ համայնքային, մարզային և հանրապետական (եզրափակիչ): ՀՀ Գեղարքունիքի մարզում համայնքային փուլը կազմակերպում և անցկացնում են Գավառի, Վարդենիսի, Մարտունու, Սևանի, Ճամբարակի և Շողակաթի համայնքապետարանները՝ մրցումներին ներգրավելով համայնքում ընդգրկված բոլոր բնակավայրերից մասնակիցներ: Համայնքային փուլի հայտերը պետք է ներկայացնել համապատասխան համայնքապետարաններ մինչև 2022 թվականի հունվարի 25-ը: Համայնքային փուլի մրցումները կանցկացվեն 2022 թվականի հունվարի 25-27-ն ընկած ժամանակահատվածում: Մրցումներն անցկացվում են առանձին՝ տղամարդկանց և կանանց միջև: Մարզային փուլին կարող են մասնակցել համայնքային փուլի յուրաքանչյուր տարիքային խմբում 1-ին և 2րդ տեղեր գրաված մասնակիցները: Մարզային փուլի մրցումները նախատեսվում է անցկացնել 2022 թվականի փետրվարի 5-8-ը ընկած ժամանակահատվածում (ժամանակացույցը կտրամադրվի մրցումների համայնքային փուլի ավարտից հետո): Մարզային փուլում յուրաքանչյուր տարիքային խմբերում 1-3-րդ տեղերը գրաված մասնակիցները (12 մասնակից) կմասնակցեն «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի եզրափակիչ փուլի մրցումներին:

Մրցաշարի մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան իրենց անձնական ոակետներով:

Հարցերի դեպքում կարող եք դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ԿՄՍ վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Գեղամ Չարվադարյանին (բջջ. 093(099)-22-37-14):

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան